27408

-110-

2749
4130

# ԽՈՐՀՐԴԱԾԵՑԷՔ
# ԱՅՍՕՐ ԱՆՃԱՌՒ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ
ՅԱԿՈԲ ԹԱԳՒՈՐԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. ՊԱՐՈՆԵԱՆ
1881

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

# ԱՅՍՕՐ ԱՆՁԱՌԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ՅԱԿՈԲ ԹԱԳՒՈՐԵԱՆ

Ի Հայրապետութեան Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Վեհափառ. Կաթողիկոսի ամենայն Հայոց

ի Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղեմայ Տ. ԵՍԱՅԵԱՅ Ս. Արքեպիսկոպոսի

եւ ի Պատրիարքութեան Կ. Պօլսոյ Տ. ՆԵՐՍԷՍԻ Ս. Արքեպիսկոպոսի



ի 600

27408

ԳՐԱԴ. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԻԵՆՆԱ
BIBLIOTH. MECHITH. VINDOB.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. ՊԱՐՈՆԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

1880

ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿ. ԳՐԱԴԱՐԱՆ
Основ. 1894 … 1939 Тифл.
Библиотека Арм. Благотв. О-ва на Кавк.

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
30619

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մարդս յաւիտենականաբար այն ատեն երջանիկ է, երբ ԿՐՕՆՔ և ՀԱՒԱՏՔ այս երկու բառերուն ներքին զօրութիւնը իր մտքին մէջ լաւ մը ըմբռնած, ինքզինքը Աստուածահաճոյ գործոց նուիրելու զգացումն կունենայ։

Այս գաղափարը և այս զգացմունքը, ինչպէս յայտնի է, ի խղճէ իրենց սրտերնուն մէջ աւելի սնուցանողներ մեր Հոգեշնորհ Սրբազան Հայրապետները եղան, որոնք ամբողջ կեանքերնին Կրօնի և Հաւատոյ պայծառութեանը զոհելով, շատ մը սքանչելի գրութիւններ շարադրեցին և հեղինակեցին, որպէս զի իւրաքանչիւր ոք Աստուածահաճոյ սկզբունքներով հրահանգուելու և իրենց յաւիտենականութիւնը երջանկութեամբ պսակելու բարեբաղդանուին։

Ահա ճիշդ ասոնց կարգէն է Սերովբէական վարուց հեղինակ Ներսէսի Շնորհալւոյն Աստուծոյ անսահմանելի զօրութեան և արարչագործութեան իբր կենդանի նկարագիր շարադրած ԱՅՍՕՐ ԱՆՃԱՌԻ այն կենսունակ երգը, որ Հայոց Սուրբ ժողովն իր ամբողջ միութեամբն ընդունած է, բարեպաշտ ժողովրդոց դիւրահասկանալի ըլլալու համար, անոր աշխարհաբառ թարգմանութիւնը հրապարակ հանելու աշխատեցայ։

Լի եմ յուսով որ ընթերցող Ազգայինք, թերութեանս ներողամիտ գըտնուելով, իրենց սիրալիր ընդունելութեամբ, նուաստս քաջալերել կը բարեհաճին։

Մնամ Ազգիս և Հայրենեացս

1880 Յուլիս 1 — Յառաջադիմութեան ցանկացող

Կ. Պոլիս յԵնի Գափու — Յակոբ Թագւորեան

# ԽՈՐՀՈՒՐԴ Ա.

—

Գրաբառ.

**Ա.** — Այսօր անճառ Լուսոյն Ծագումն, 'ի փրկութեան մեր կատարումն. խոնարհի 'ի վերնատունն ի ստուերական տօնից լրումն. Նախ քան զընթրիսն խորհրդոյ սփածաւ զենջակ արկօղն լուսոյ, և ջուր առեալ ծառայաբար զոտս լուանայր զաշակերտացն:

Աշխարհաբառ.

**Ա.** — Այսօր անճառելի Լուսոյն Ծագումն (Ցննէան Բանն Աստուած) մեր փրկութիւնը կատարելու համար ստուերական տօնից (Հին օրինաց Պասէքին) լրումէն ետքը՝ վերնատան մէջ կը խոնարհի. լոյս հագնողը խորհրդական ընթրիքէն (Ս. Հաղորդութեան խորհրդէն) յառաջ զենջակ կապեց և ջուր առնելով իբրև ծառայ աշակերտաց ոտքերը կը լուար:

Գրաբառ.

**Բ.** — Բանին հօր փառաց լուսոյ Պետրոս մերձիլ յոտս ոչ ներէր. այնմ ձեռաց որոյ են գործք երկնից երկինք և երկրաւորք, որով կուրաց աչքք բացան խուլք և համրք արձակեցան, որ վերածեաց զինքն 'ի ծովէն սաստեաց ալեաց ելևեցին:

Աշխարհաբառ.

**Բ.** — Չէր թողուր Պետրոս որ իւր ոտից մօտենան Հօր Աստուծոյ փառաց յոյս եղող Բանին այն ձեռ[...]քերն՝ որոյ գործերն են երկնից ե[...] կինքն ու երկրաւոր արարածներ[...] անոնցմով կուրաց աչքերը բացու[...]ցան, խուլերն ու համրերն արձա[...]ուեցան, և զինքը (Պետրոսը) ծով[...] հանեց (կամ բռնեց) ալիքներո[...] սաստեց և անոնք հանդարտեցան[...]

Գրաբառ.

**Գ.** — Գլխոյն ընտրեալ հօտ[...] փոքու սատէր զխորհուրդն ոչ գ[...] տելոյ. որով դառնայր և հնազանդ[...] զոտս և զգլուխս մաքրել մաղթէ[...] զգլխոյս ասէ չէ ինչ պիտոյ լու[...] ցումն ջրոյ զի լուացեալ է. ոտի[...] պէտք են մաքրութեան յօդի[...] 'ի գ[...] [illegible] սրբութեան:

Աշխարհաբառ.

**Գ.** — Ընտրեալ փոքր հօտին ([...] շպէրտոսի) գլխաւոր եղողին (Պետր[...] ոսին) կը յանդիմանէր (Տէրը) այն խոր[...] հուրդը չհասկնալուն համար, նա[...] կը դառնար կը հնազանդէր և ի[...] ոտքերը ու գլուխը մաքրել կը խըն[...] րէր (սա որ կըսէ Տէր) այս գլու[...] (Տէրը իւր անձը ակնարկելով) ջրով[...] ուացման պէտք չունի, որովհետ[...] լուացուած է, (բայց) ոտքերդ պէ[...] է որ մաքրուին Գլխոյս հետ ([...]) Սրբութեամբ միանալու համար:

Գրաբառ.

**Դ.** — Դասուց իւրոց աշակ[...] տաց զօր նախ բանիւ վարդապետե[...]

սօր գործով ղծայրագոյնն եցոյց
ննքեան գլխոնարհութիւն ։ սպասա֊
որեալ հողեղինաց այն որ անտեան է
րեղինաց. տարեալ պաշտօն իւր ծա֊
այեցն այն որ պաշտին 'ի Սրովբէից։

Աշխարհաբառ.

**Դ.** — Այն ծայրագոյն խոնար֊
ութիւնը զոր յառաջ խօսքով (Տէրը)
ր աշակերտներուն քարոզեց, այսօր
ործքով իւր վրայ ցոյց տուաւ, սպա֊
ւորելով հողեղեններու այն՝ որ ան֊
սանելի է հրեղինաց. և պաշտօն տա֊
լով (ծառայելով) իւր ծառայնե֊
ուն այն՝ որ Սերովբեներէն կը պաշ֊
ուի ։

Գրաբառ.

**Ե.** — Եթէ Տէրս աստ էի և
րդապետս բոլորից. զաշակերտաց
ղծառայից զոտըս լուացի 'ի հնոյ
տից. միմեանց և դուք համբերու֊
եամբ ցուցէք զնոյն խոնարհու֊
իւն. բարձրացելոյն 'ի կործանումն
անկելոյ բնութեանդ կանգ֊
ւմն ։

Աշխարհաբառ.

**Ե.** — (Ես) կըսէ՝ եթէ ես որ ա֊
րածոց Տէրն և բոլորից Վարդա֊
տն եմ, ձեր՝ որ իմ աշակերտներս
ծառայներս էք, ոտքերն հին աղ֊
ն լուացի, դուք ամենքնիդ ալ մէկ
նութեամբ միաւորուած նոյն խո֊
րհութիւնը ցուցէք մէկզմէկու,
րձրելոյն (չար հպարտին) կործան֊
ն և (մարդկային) անկեալ բնու֊
ան կանգմանն համար ։

Գրաբառ.

**Զ.** — Զոր մաքրեցեր յաւազանին մաքուր ձեռօք զոտըս նոցին. և ուսուցեր խոնարհութեամբ յաղթող լինել չար հպարտին. եւ զիմ լուա ըզ տիղմն մեղաց աղաչանօք սրբոյ գընդին. և ըզգնացս ուղղեա զոտին խոնարհութեամբ ելիւք յերկինս ։

Աշխարհաբառ.

**Զ.** — (Ո՛վ Տէր) Դուն որ մաքուր ձեռքերով անոնց (աշակերտացդ) ոտքերը լուացիր աւազանին մէջ, և խոնարհութեամբ չար հպարտին յաղթել սորվեցուցիր, իմ մեղացս տիղմն ալ լուա Սուրբ գնդին (աշակերտաց խումբին) աղաչանօքն, ու ոտիցս գընացքն ուղղէ, որպէս զի խոնարհութեամբ յերկինս ելնեմ։

## ԽՈՐՀՈՒՐԴ Բ.

Գրաբառ.

**Է.** — Եկեալ զօրէնսն Մովսէսի զոր խօսեցաւ 'ի Սինայի. եկեր ըզզատն օրինակին, եւ ըզբաղարջն ընդ եղեգին. ըզհինն 'ի նորըս փոխելով, զըստուերըն 'ի լոյս ճշմարտելով. փոխան զատին ինքն գոլով Գառն Աստուծոյ նուիրելով ։

Աշխարհաբառ.

**Է.** — Կատարեց Մովսէսի այն օրէնքներն, զորս ինքը (Տէրը) խօսեցաւ Սինայի (լեռան) վրայ, օրինակ եղող զատն ու բաղարջը եղեգին հետ կերաւ, հինը (Մովսիսականը) այս նորին (Ս. Հաղորդութեան խորհրդոյն)



փոխելով և ստուերն (օրինակը) լոյսի (ճշմարտութեան) դարձուց և այն (հին օրինաց) զատին տեղ ինքն եղաւ Աստուծոյ նուիրեալ գառնը ։

Գրաբառ.

**Ը.** — Ընդ բաղարջին հաց անխմոր, ետ զմարմինն իւր զերկնաւոր. ըզկուսածինն անսերմնաւոր, զանապականն և զհոգեւոր. ընդ ոչխարին արեանն ուխտին, ետ մեզ զարիւնն իւր ուխտ կրկին. եւ եղեգան զառնագունին՝ փոխան ըզվարս աստուածային ։

Աշխարհաբառ.

**Ը.** — Բաղարջին՝ անխմոր հացին տեղ՝ իւր երկնաւոր, կուսէն անսերմնաբար ծնուած անապական և հոգեւոր մարմինը տուաւ. և հին ուխտին ոչխարին արեանը տեղ՝ իւր արիւնը տուաւ մեզ, իբրև նոր ուխտ. և դառն եղեգին փոխան ալ՝ իւր Աստուածային վարքը ։

Գրաբառ.

**Թ.** — Թագաւորն արարածոց զհացըն կենաց ետ քաղցելոց. եւ ըզբաժակն ուրախարար որք յԱդամայ տրտմեցելոց. այս նոր ուխտ է իմոյ արեան՝ փոխան հընոյ ուխտին արեանց. զոր յիշատակ իմ առնիցէք մինչև եկից ես միւսանգամ։

Աշխարհաբառ.

**Թ.** — Արարածոց Թագաւորը կենաց հացը տուաւ քաղցեալներու,
և Ադամէն (կամ Ադամի պատճառաւ
տրտմեալներուն ալ ուրախարար բ
ժակը, (ըսելով) իմ արեանս նոր ուխ
տըն է այս՝ հին ուխտին արեա
տեղ. զայս ըրէք 'ի յիշատակ իմ մի
չեւ որ ես նորէն գամ։

Գրաբառ.

**Ժ.** — Ժողովեալքս 'ի քէն հա
ցեմք ընդ ժողովեալ մետասանին.
զկենարարըդ քո մարմին, բաշխեալ
տուր ընդ բաժակին. շնորհեա
մեզ Տէր ընդ նոսին հաղորդ լինե
քում սեղանին. կենաց հացիդ յ
փափաքիմք եւ ըմպելւոյդ ում ծ
րաւիմք ։

Աշխարհաբառ.

**Ժ.** — Մենք ժողովեալքս՝ ժողով
եալ մետասան աշակերտացդ հետ քե
մէ կը խնդրեմք դուն որ կենարար մա
մինդ բաշխելով բաժակին հետ տը
ւիր, մեզ ալ շնորհէ՛ Տէ՛ր, որ անոն
հետ մասնակից ըլլամք քու սեղանի
կենաց հացին՝ որում կը ցանկամ
և ըմպելւոյդ՝ ում ծարաւի եմք ։

Գրաբառ.

**Ի.** — Ի յընտրելոց աշակերտաց
Յուդաս մեկնեալ 'ի սուրբ դասանցն
զբարձող մեղաց զգառն Աստուծ
մատնէր 'ի մահ ընդ արծաթոյ.
յընթրիսն հոգեւոր մերձի ժպիրհ
և նենգաւորն. ուտելով ընդ Վար
դապետն յաճախէ զխաբէութիւն ։

Աշխարհաբառ.

**Ի.** — Ընտրեալ աշակերտներէն

…յն սուրբ գաւներէն մեկնելով Յու… …ան՝ արծաթի սեղ 'ի մահ կը մատ… …էր մեղքերն իւր վրայ առնող Ա… …ուծոյն գառնը. այն հոգևոր ընթըր… …ոց կը մնտենայ ժպիրհն ու նենգա… …որը և Վարդապետին հետ ուտելով …ւր խաբէութիւնը կ'առաւելու :

Գրաբառ.

**Լ.** — Լսէին խօսէր աշերսալի՝ …աւարելոյն վասըն դարձի. մի ոմն ի …ենջ աւէ նղբա՛րք, զիս մատնելոց է …ա 'ի մահ. Պետրոս լռեալ զայն զար… …ուրէր եւ ակնարկէր առ Յովհաննէս. …արցանել թէ ո՛վ իցէ գաւաճանող …արդապետին:

Աշխարհաբառ.

**Լ.** — Լոյսն (Տէրը) աշերսանօք կը …սօսէր խաւարելոյն (Յուդայէն) դար… …ին համար, և կըսէ, Եղբարք ձեզմէ …ին զիս 'ի մահ պիտի մատնէ. Պետ… …ոս լռելով զայն կըզարհուրէր և առ Յովհաննէս կ'ակնարկէր հարցնելու համար թէ՛ ո՛վ է Վարդապետին դա…ւաճանողը :

# ԽՈՐՀՈՒՐԴ Գ.

Գրաբառ.

**Խ.** — Խնամով սիրոյն յիւր սի… …ելեացն բղտրտմութիւնն փարատ… …եաց. Թացեալ պատառ տայ Յուդա… …յին նրչուակեալ զգողըն մատնիչ. …որ առեալ և մերկացաւ յԱստուա…ծային Հոգւոյն շնորհաց, մատնեցաւ նախաչարին ընդ մատնութեան Վար…դապետին :

Աշխարհաբառ.

**Խ.** — (Իւր Տէրը) սիրոյն խնամո…վըն իւր սիրելիներէն (աշակերտներէն) տրտմութիւնը փարատեց. Թրջելով պատառը Յուդայի կուտայ, որ մատ…նիչ գողը խայտառակէ. զոր առնե…լով (Յուդա) խեղճն մերկացաւ Աստ…ւածային հոգւոյն շնորհքէն, և իւր Վարդապետին մատնութեանը հետ՝ ինք ալ նախաչարին (սատանայէն) մատ…նուեցաւ :

Գրաբառ.

**Ծ.** — Ծայրագոյն լուսոյն զըրկ…եալ խաւարասէրն արտաքս ելեալ. Տէրըն յայտնէր լոյս եղելոցն ըզգայ…թակղելըն 'ի գիշերին. Պետրոս խօսէր խրախուսելի եւ կշտամբիւր հաւախօ…սի, զիւրն յաշխարհէ զփոխիլն ասէր և զգալուստ հոգւոյն պատմէր :

Աշխարհաբառ.

**Ծ.** — Խաւարասէրը (Յուդան) ծայրագոյն լոյսէն զրկուելով դուրս ելաւ, Տէրը լոյս եղողներուն կը յայտ…նէր թէ այն (մատնութեան) գիշերը պիտի գայթակղին իրմէ. Պետրոս թէպէտ արիութեամբ կը խօսէր, բայց հաւին խօսելովը կը յանդիմանուէր: (Տէրը) յաշխարհէ իրեն մեկնիլն ու Հոգւոյն Սրբոյ գալուստը կը պատ…մէր (կը քարոզէր) :

Գրաբառ.

**Կ.** — Կեդրոնեան յայնկոյս ձորոյ



'ի վերնատունն եւ խորհրդոյ. Եմուտ պարտէզ ընդ պարտիզի եմոյծ զԱդամ յԱդէն դրախտին. Մուծցես և զմեզ Տէր ընդ նմին ուստի հաներ նախ զառաջինն. զի ժառանգել զհայրե…նին արժանասցուք մեք վերստին :

Աշխարհաբառ.

**Կ.** — Ելաւ խորհրդական վերնա…տունէն որ Կեդրոնեան ձորոյն անդին կողմն էր, պարտիզի տեղ պարտէզ մը մտաւ, և Ադամը Ադէն դրախ…տը մտցուց. մեզի ալ Տէ՛ր, անոր հետ հոն մտցնես, ուստի առաջին մարդը (Ադամը) հանեցիր. որպէս զի հայրենական փառքը վերստին ժա…ռանգելու արժանի ըլլամք :

Գրաբառ.

**Հ.** — Հոգայր ըզկրիցըն տըրտա…մաբար երիւքն եղեալ առանձնաբար. փըրկել զաշխարհս հոգիս յօժար բայց է բնութիւն մարմնոյս տկար. ոչ ոմն ուժեղ և զօրաւոր եւ ոմն ան…զօր վըտանգաւոր. այլ մի և նոյն զօղ միաւոր կըրէր ըզկիրսըն կամաւոր :

Աշխարհաբառ.

**Հ.** — (Տէրը) Իւր երեք աշակեր…տաց (Պետրոս, Յովհաննէս և Յակոբոս) հետ առանձնացած տրտմութեամբ կը հոգար իւր կրելիք չարչարանացն համար. (ու կըսէր) զաշխարհ փրկե…լու համար հոգիս յօժար է, բայց մարմնոյս բնութիւնը տկար է, ո՛չ թէ մին ուժեղ և զօրաւոր, և միւսն ան…զօր և վտանգաւոր էր, այլ երկուքն ալ մէկզմէկու հետ միաւորուելով կամաւորապէս կըկրէր նոյն կիրքերը:

Գրաբառ.

**Ձ.** — Ձայնիւ մաղթէր աղօթական վասն իմ առ Հայր իւր էական. ծու…նըր զնէր խոնարհական որում կըրկ…նի ծունր ամենայն. եթէ փրկիլ մարդ…կան հնար է առանց մահու իմ որ…դրեալ է. բաժակ մահուս յինէն անց…ցէ ոչ իմ կամաւ, այլ քոյդ անցէ :

Աշխարհաբառ.

**Ձ.** — Աղօթական ձայնիւ (Տէրը) կը պաղատէր ինձ համար իւր էական հօրը, և խոնարհական ծունր կը դը…նէր այն՝ որում ամենայն ծունր կը խոնարհի (ու կըսէր) Եթէ առանց իմ մահուս, գրուած է մարդկան փըր…կութիւնը, կարելի է՝ այս մահուան բա…ժակը թող անցնի ինձմէ, բայց ո՛չ թէ իմ կամքս, այլ քուդ թող ըլլայ :

Գրաբառ.

**Ղ.** — Ղօղեալ յերկիւղ քրտանց հոսման ողոռնաձև կայլակ վիժման 'ի զօրանալ հրեշտակ մերձեալ զօրի…նական գիրն լցեալ. զի կատարեալ էառ զբնութիւն Աստուածն բան զմարդկութեան. պարտ էր զերկիւղ և զտրտմութիւն յիւրումն կրել տը…նօրէնութիւն :

Աշխարհաբառ.

**Ղ.** — (Տէրը) Երկիւղի մէջ ըն…կըղմած քրտանց ողոռնաձև կաթիլ…ներ կը թափէր, այն ատեն՝ զայն զօ…րացնելու համար հրեշտակ մօտե…

ցաւ որ օրինական գիրը կատարուեցաւ, վասն զի Բանն Աստուած կատարելապէս առաւ մարդկային բնութիւնն և անոր համար պէտք էր որ իւր տնօրէնութեան (փրկագործութեան խորհրդոյն) մէջ երկիւղ ալ տրտմութեան ալ կրէր։

# ԽՈՐՀՈՒՐԴ Դ.

Գրաբառ.

Ճ.— Ճառագայթ փառաց Էին որ ըստ բնութեանն մարդկային տագնապեցար 'ի գիշերին աղօթեցեր առ Հայր յերկինս. ծագեա 'ի մեզ զլոյս երկնային և փարատեա զերկիւղ չարին. մատունք հոգւոց մեր և մարմնոյ յերկիւղ քո սուրբ բեւեռեսցին։

Աշխարհաբառ.

Ճ.— (Դու) Ո՛վ Էին (Հայր Աստուծոյ) փառաց ճառագայթը, որ մարդկային բնութեան համեմատ տագնապեցար այն գիշերուան մէջ, և դէպի յերկինս առ Հայր աղօթեցեր, ծագէ՛ մեր վրայ քու երկնային լոյսդ և փարատէ չարին երկիւղը, որպէս զի մեր հոգւոյ մասերը (միտք, կամք և զգայարանք) և մարմինը քու սուրբ երկիւղովդ հաստատուին։

Գրաբառ.

Մ.— Մերձեալ Յուդաս որ մատնելոց հանդերձ զասուն փարիսեցւոց. անկան նման սատրանկելոցն որք յաւիտեան չեն կանգնելոց. Յուդաս նենգաւ համբուրելով առիթ մահուն նշան տալով. փոխան սիրոյ զնա մատնելով չար ընդ բարւոյ վճարելով։

Աշխարհաբառ.

Մ.— Մատնիչ Յուդան մօտեցաւ (Տէրոջը) փարիսեցւոց դասուն հետ, և երկինքէն վար իյնող չար հրեշտակաց նման ինկան գետինը, որոնք յաւիտեան չը պիտի կանգնին. նենգութեամբ համբուրելով Յուդա (զՔրիստոս) մահուան նշանը տուաւ. և սիրելու տեղ մատնելով զայն՝ բարւոյ փոխան չարիք հատոյց։

Գրաբառ.

Յ.— Յայնժամ առ գութ սիրոյն Պետրոս զծառային անուն Մաղքոս. եհատ սուսերբ զականջն աջոյ որ ոչ լուաւ Տեառն իւրոյ. իսկ Տէրն մեր արագապէս յունկն մերձեալ բժշկապէս. առողջացոյց Աստուածապէս զոր ոչ տեսին կուրացն հանդէս։

Աշխարհաբառ.

Յ.— Այն ատեն՝ Պետրոս իւր սիրոյն գութէն (որ առ Տէր ունէր) Մաղքոս անուն ծառային աջ ականջը՝ կտրելով իւր սուրովը, որով կտրեց. իսկ մեր Տէրը իբրև բժիշկ մօտեցաւ շուտ մը նորա ունկան և Աստուածապէս առողջացոյց, զոր կուրաց ժողովը չտեսաւ։

Գրաբառ.

Ն.— Նոր հօտին փոքու ցրուեալ քանզի զհովիւն քաջ հարեալ. Պետրոս միայն զհետ երթեալ. 'ի յաղջըկանէ վիժին չարժեալ. նշանակեալ հաւն խօսէր առ 'ի Պետրոս Տէրն ակնարկէր. զբանն յիշէր դառն արտասուէր 'ի գլորմանէն դարձեալ կանգնէր։



Աշխարհաբառ.

Ն.— Ցրուեցաւ այն նոր ու փոքրիկ հօտը, վասն զի բռնուեցաւ քաջ հովիւը. Պետրոս միայն նորա ետեւէն կերթար, բայց վերջն ալ աղջիկէ մը տկարացաւ (ուրացաւ) և երբ նշանակեալ հաւը կը խօսէր, Տէրը կը նայէր Պետրոսի, որ (Պետրոս) նորա (Տիրոջ) այն խօսքը (Դու դեռ հաւը չխօսած երեք անգամ զիս ուրանաս) յիշելով դառնապէս կարտասուէր, և իւր գլորմանէն վերստին կը կանգնէր։

Գրաբառ.

Շ.— Շնորհեալ վիժին եկեղեցւոյ զոր պահեցեր 'ի հասելոյ. և կանգնեցեր 'ի գլորելոյ վասն սրտին արտասուելոյ. կանգնեա և զիս Տէ՛ր ընդ նորին 'ի գլորմանէ սայթաքողին. տալով աչաց յորդ արտասուս և ջուր նման ծովու գլխոյս։

Աշխարհաբառ.

Շ.— (Ով Տէր՝ որ) ներելով եկեղեցւոյ վիժին, պահեցիր զայն իյնալէ, և իւր սրտովն արտասուելուն համար կանգնեցիր զայն իւր գլորմանէն, զիս ալ, Տէր կանգնէ անոր հետ սահեցողին (սատանային) անկմանէն, աչացս յորդ արցունք և գլխոյս ծովու նման ջուր տալով։

Գրաբառ.

Ո.— Ո՛վ կամաւ զանկապելին կապեալ զձեռս արձակողին, 'ի յապարանսն տանէին Կայիափայ եւ Աննային. ծառայն զերեսն այն ապտակէր յորմէ Սրովբէն թեւաքօղէր [illegible] թուք արձակեալ պիղծ բերանովն [illegible] յայն որ կուրին լոյս ծագեաց թքովն [illegible]

Աշխարհաբառ.

Ո.— (Ով Յիսուս) ձեռքեր արձակող անկապելին (զՅիսուս Քրիստոս) իւր կամաւ կապելով Կայիափայի և Աննայի ապարանքը կը տանէին, կապտակէր ծառայն այն երեսը՝ յորմէ Սերովբէն թեւերով կը ծածկէր ինքզինքն. կը թքնէր պիղծ բերնով Անոր որ իւր թքով կուրին աչաց լոյս շընորհեց (ծագեց)։

# ԽՈՐՀՈՒՐԴ Ե.

Գրաբառ.

Չ.— Չար կապանաց մարդկան[illegible] լուծիչ որ կապեցար ընդ կապելոյն [illegible] զիս արձակեա յինքնակապէս մեղաց կապից դժոխայնոյն. որ ընդ մեզօք պարտաւորին կացեր անմեղդ 'ի յատենի. յորժամ փառօք գաս հայրենի մի դատեսցես զիս ընդ նոցին։

Աշխարհաբառ.

Չ.— Ո՛վ մարդկան չար կապանաց լուծիչը՝ որ կապելոյն տեղ[illegible] կապուեցար արձակէ զիս դժոխային[illegible]

…մեղաց այն կապերէն որովք կապած
…էմ ինքզինքս, և դու անմեղդ որ
…մեղօք յանցապարտին փոխան՝ դա-
…տաստանի կայնեցար, երբոր քու հայ-
…ենի փառօքդ գաս գիս անոնց հետ
…մի՛ դատէր ։

Գրաբառ.

**Պ.** — Պատկառանօք հինն Ադա-
մայ որ ձաղեցար վասն նորա. ջնջեա
զամօթ մեղաց լրբին որով զերեսս
իմ ծածկեցին. որ ներեցեր չար
ծառային ածել ձեռօք քեզ ապտա-
կին. հար ուժգնակի զդէմս չարին
որպէս և գիս եհար ուժգին ։

Աշխարհաբառ.

**Պ.** — Հին Ադամին պատկառան-
քովը որոյ համար գանակոծուեցար
…ու, ջնջէ լրբենի մեղաց ամօթը՝ ո-
…ով իմ երեսներս ծածկեցին, և դու
…ր թողուցիր (Ներեցիր) չար ծառային
…իր ձեռքովը քեզի ապտակ զարնե-
…ելուն՝ ուժգնակի զա՛րկ չարին դէմ-
…քին, ինչպէս որ սաստիկ նա ինձ
…զարկաւ ։

Գրաբառ.

**Ջ.** — Ջահն լուսոյ յառաւօտին
…յուրբաթուն հնոյ զատկին. կայր ա-
…ռաջի դատաւորին ծառայն նստէր
…յատենին. ի հարցանել Պիղատոսի
…Տէրն ոչ առնէր պատասխանի, զի
…անխտառաց գիրն լցցի եղէ ես մարդ
…որ ոչ խօսի ։

Աշխարհաբառ.

**Ջ.** — Լուսոյ ջահը՝ Հին-Զատկին
ուրբաթ (աւուր) առաւօտուն դատա-
ւորին առջև կը կենար, բայց ծառայն
ատենին մէջ կը նստէր. Պիղատոսի
հարցմանը Տէրը պատասխան չէր
տար, որպէս զի կանխասաց գիրը կա-
տարուի, (որ կըսէ) ես մարդ մ'եղայ
որ չխօսիր (կամ անխօս մարդ մը եղայ) ։

Գրաբառ.

**Ռ.** — Ռամկական դասք զինուո-
րացն արկին հանդերձ նախատանաց.
այնմ որոյ զգեստն է լոյս փառաց
իբրև զօթոց զինքեամբ արկած. ՚ի
ծունր իջեալ կատակէին զգլուխն ե-
ղեգամբ հարկանէին. պսակ ՚ի փշոց
բոլորէին զփուշ մեղացն բարձողին ։

Աշխարհաբառ.

**Ռ.** — Ռամիկ զինուորներն նա-
խատանաց լաթ ձգեցին անոր՝ ո-
րոյ զգեստը փառաց լոյսն է՝ օթոցի
պէս իւր վրայ առած. ծունր իջնե-
լով կը ծաղրէին զայն, գլուխը եղէ-
գով կը ծեծէին և փշեղէն պսակ մե-
ղաց փուշը վերցնողին գլուխը կը
դնէին ։

Գրաբառ.

**Ս.** — Սոսկալին Սերովբէից բառ-
նայր ինքեամբ զփայտ խաչին. մինչ
՚ի տեղի Գողգոթային յորում եգ-
եալ մարդն առաջին. ետուն ըմպել
գինի զմռսեալ և կերակուր լեղեա-
խառնեալ. որով զպտղոյն դառն ճա-
շակ փոխեաց մեզ քաղցր և ախորժակ ։

Աշխարհաբառ.

**Ս.** — Սերովբէներէն սոսկալին



(Տէրը) խաչափայտն անձամբ վերցուց
(տարաւ) մինչև ՚ի Գողգոթա՝ ուր
դրուած էր առաջին մարդը, զմռսո-
ւեալ գինի խմցուցին անոր, և լեղեա-
խառնուած կերակուր տուին, որով
դառնահամ պտուղը՝ քաղցր ու ա-
խորժելի ըրաւ մեզ համար ։

Գրաբառ.

**Վ.** — Վերնականքն զարհուրեալ
տեսին զՏէրն մերկացեալ. և զհան-
դերձն բաժանեալ պատմուճանին
վիճակ արկեալ. ըզձեռսն և զոտսն
ծակեցին բառ յայտնապէս Դաւթեան
ձայնին. ընդ փայտ խաչին բևեռեցին
զմատունսն որ գրեաց ՚ի տախտակին ։

Աշխարհաբառ.

**Վ.** — Վերնականք (Հրեշտակք) զար-
հուրեցան երբոր Տէրը մերկացեալ
նորա հանդերձները բաժնուած և
պատմուճանին վրայ վիճակ ձգուած
տեսան. ծակեցին նորա ձեռքերն ու
ոտքերը, ինչպէս որ Դաւիթ յայտ-
նապէս մարգարէացած էր և խաչա-
փայտին գամեցին այն մատները որ
(Մովսիսական օրինաց) տախտակին վը-
րայ գրեցին ։

## ԽՈՐՀՈՒՐԴ Զ.

Գրաբառ.

**Տ.** — Տարածեալ ձեռք ընդ ձե-
ռաց ոտք ընդ ոտից ընթանալեաց.
փայտ ընդ փայտի դառըն պտղոյ
կեանք ընդ մահու փոխարկելով. ՚ի
մէջ երկուց անօրինաց կայր մերկաց-
եալ տուողն օրինաց. զոր ոչ տեսին
ազգն կուրաց բաց ՚ի միոյն յաւա-
ղակաց ։

Աշխարհաբառ.

**Տ.** — Տարածեց (Տէրը) իւր ձեռ-
քերն (Նախամօր տեղ ՚ի գիտութեան ծա-
ռըն երկնցող) ձեռաց տեղ, իւր ոտքե-
քերն (Նորա տեղ ՚ի գիտութիւն) ընթա-
ցող ոտից տեղ. դառն պտուղ ու-
նեցող փայտին տեղ տուաւ փայտ մը
(Խաչը) և մահու փոխան ալ կեանք
տուաւ. երկու անօրինաց մէջ մերկ կե-
ցած էր օրէնքներ տուողն, զոր չը
տեսաւ (չհասկցաւ կամ չհաւատաց) կու-
րաց (Հրէից) ազգը՝ բաց ՚ի մի աւա-
ղակէն ։

Գրաբառ.

**Ր.** — Րոպէից արեգականն ըզ
տիւն արար գիշերանման. զըստուե-
րըն քօղ արկ մերկութեանն զի մի
տեսցէ ակն անարժան. ՚ի մէջօրեայն
ներսմայաւ յորժամ ադամ մեղօք մե-
ռաւ. ՚ի յիններորդն ՚ի լոյս դարձաւ
յորժամ մահուամբ մահըն լուծաւ ։

Աշխարհաբառ.

**Ր.** — Արեգական րոպէից լոյսը
([illegible]) տիւը (ցերեկը) գիշերուան
պէս մթնցուց. Ստուերն (Մութը) իւր
մերկութեան ծածկոյթ ըրաւ, որպէս
զի անարժան աչքեր չտեսնէին զին-
քը. միջօրէի ատեն խաւարեցաւ (Բո-
լոր աշխարհն) որ ատեն Ադամ մեռաւ
իւր մեղքերով, բայց ժամն իններ

դարձեալ լուսաւորուեցաւ երբոր (Տիրոջ) մահուամբ մահը (մահըն իշ-խանըլըղընը) ջնջուեցաւ ։

Գրաբառ.

**Յ.** — Յօղէր արտօսրը ցաւագին մայր Տեառն որ կայր մերձ առ Խաչին. յորժամ լսէր ըղձարաւին բարբառելոյ իւր միածնին. եռուն քացախ խառնեալ լեղի այնմ որ բղխեաց գետ յադենի. և 'ի վիմէն վտակ բարի արբոյց տոհմին դառնացողի ։

Աշխարհաբառ.

**Յ.** — Տիրոջ մայրը խաչին քով կեցած ցաւագին արցունք կը թափէր՝ երբոր իւր միածին որդւոյն «ծարաւի եմ» բարբառելը կը լսէր. լեղիաւ խառնեալ քացախ տուին անոր՝ որ Ադենի մէջ գետ բղխեցուց, և քարէն բարի (անոյշ) ջուր խմցուց դառնացող ազգին (Հրէից) ։

Գրաբառ.

**Խ.** — Խաւարեալ յերրորդ ժամու օձին զմիտս նախնւոյ մօրն Եւայի. 'ի վեցն րանկեալ մարդն առաջին հաւանական բանիւ նորին. 'ի սոյն ժամու Տէրն 'ի խաչին զի քաւեսցէ զմեղս նոցին. և յորժամ եւ Ադամն հին եդ զաւազակն 'ի մէջ դրախտին ։

Աշխարհաբառ.

**Խ.** (Օյն հագօծ սաաթընտա) ժամը երեքին՝ Նախամօր Եւային միտքը մոլորեցուց. ժամը վեցին նորա (ե-ռայէն) համոզիչ խօսքովը սխալեցաւ (Ալդանտը) առաջին մարդը (Ադամ) սոյն այս ժամուն Տէրը խաչուեցաւ որ քաւէ անոնց մեղքը, և որ աւերն հին Ադամը դրախտէն ելաւ՝ (Նոյն ժամուն Տէրը) աւազակը դրախտին մէջ դրաւ ։

Գրաբառ.

**Փ.** — Փարելի բարբառ ընդ իմ էլի էլի առ Հայր գոչէր, զհոգին կամաւ Հօր աւանդէր զհոգիս մարդկան նոյն ընծայէր. երկիր հիմամբք սասանեցաւ և վարագոյրն ընդ մէջ հերձաւ. վէմք 'ի յինքեանց պատառեցան և գերեզմանք մահու բացան ։

Աշխարհաբառ.

**Փ.** — Ողորմուկ ձայնով ինձ համար էլի-էլի (Աստուած իմ, Աստուած իմ) կը գոչէր (Տէրը) առ Հայր. կամաւ իւր հոգին կ'աւանդէր Հօր, նոյնպէս (ալ) մարդոց հոգիները կ'ընծայէր. երկիրն (յայնձամ) հիմէն (թէմէլտէն) սարսեցաւ (կամ շարժեցաւ) տաճարին վարագոյրը մէջ տեղէն պատռեցաւ, քարերն ինքնիրենցմէ ճեղքուեցան, և մեռելոց գերեզմաններ բացուեցան ։

Գրաբառ.

**Ք.** — Քարոզի 'ի սքանչելեացս Աստուած մարմնով վասն իմ խաչեալ մերով բնութեամբս մեռանի Աստուած անմահ խոստովանի, կրկնավտակ կողին աղբերբք եկեղեցի իւր հաստատի. ջրովն մաքրի զարիւնն ըմպէ զՈրդի ընդ Հօր փառաւորէ ։



Աշխարհաբառ.

**Ք.** — Այս բոլոր սքանչելիքներէն կը քարոզուի թէ՝ ինձ համար Աստուած մարմնով խաչուեցաւ, մեր (մօրթեայէն) բնութեամբը կը մեռնի, և Աստուած (Աստուածութեամբ) անմահ կը խոստովանուի. կողէն վազած կրկնավտակ աղբիւրներովը իր ԵԿԵՂԵՑԻՆ կը հաստատուի, ջրովը կը մաքրուի (յաւաղանի մկրտութեան) արիւնը կը խմէ ('ի Ս. Հաղորդութեան) և Որդին (զՅիսուս Քրիստոս) Հօրը հետ կը փառաւորէ ։

ՎԵՐՋ

27408
основ. 1894 ... пер. 1939
БИБЛИОТЕКА

10–
8

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL024350